

րու պատմութեան վերաբերմամբ թանկագին բովք մըն է և ա-
նոր տեղեկութիւնները հնախօսական և մատենագրական յետնա-
գոյն գիւտերու մէջ քանիցս ստացած են փայլուն հաստատու-
թիւններ: Ս. Ծննդեան եկեղեցւոյ վիճակի մասին ան կը պատմէ
արտավէպ մը (anecdote) 2. դարու, զոր պէտք չէ գանց ընել,
ցորչափ անով կը հաստատուին նոյն եկեղեցիին ուսումնասիրու-
թեան եզրակացութիւնները: Սամարացիներուն կողմէն Երուսա-
ղէմի այրուած եկեղեցիներուն և հիւրանոցներուն վերաշինու-
թեան առթիւ Աղեքսանդրեան Տարեգիրը կը շարունակէ. — «Թա-
գաւորը պատուիրեց պատուիրակին քանդել Բեթղէհէմի եկեղե-
ցին, վասն զի ան փոքր էր, և չինել զայն աւելի հոյակապ, ըն-
դարձակ և փառաւոր, այնպէս որ Երուսաղէմի մէջ անոր նմանը
չգտնուի: Պատուիրակը Երուսաղէմ հասնելով՝ ուխտաւորաց հա-
մար շինեց հիւրանոց մը, նորոգեց այն եկեղեցիները զոր այրած
էին Սամարացիները. բազմաթիւ վանքեր վերականգնեց, վեր-
ջապէս Բեթղէհէմի եկեղեցին փլցուց և վերաշինեց, ինչ որ այ-
սօր կը տեսնուի: Երբ ամէն բան վերջացաւ, ան եկաւ թագա-
ւորին մօտ, որ ըսաւ անոր. «Նկարագրէ ինձ թէ ի՞նչպէս շինե-
ցիր Բեթղէհէմի եկեղեցին»: Երբ ան նկարագրեց զայն, թագա-
ւորը անոր նկարագրութիւնը վայելուչ չգտաւ և չհաւնեցաւ ու
նոր նկարագրած ձևին: Այն ատեն բարկացաւ անոր և ըսաւ.
«Յափշտակեցիր զրամները և գողցար: Դուն շինեցիր չէնք մը որ
շատ փոքր է և մթին: Իմ ուղածիս պէս շինած չես եկեղեցին և
ինձ խորհուրդ չես հարցուցած»: Այս խօսակցութենէն յետոյ թա-
գաւորը զանիկա գլխատել տուաւ:

Մէկ կողմ գնելով զարգարանքի մասերը, այս պատմութեան
հիմը կարեւոր կը գտնենք՝ Ս. Ծննդեան եկեղեցիին յուստինիա-
նոսեան վերանորոգութեան առթիւ:

Նախ ճշգինք Յուստինիանոսի մտադրութիւնը և իր նպա-
տակին գործադրութիւնը: Յուստինիանոսի նման մեծ շինարար
կայսր մը ծրագիր մը ունեցած է Բեթղէհէմի կոստանդինեան ե-
կեղեցիին տեղ չինել աւելի բարձր, աւելի հոյակապ, իր ժամա-
նակին յարմար չքեղ չէնք մը, կտակած չկայ ասոր: Կայսրը սի-
րահար չքեղ և մեծակառուց չէնքերու, իր յիշատակը յաւերժա-
ցընելու համար կայսրութիւնը կործանելու աստիճան իր անձնա-
կան փողքէն խանդավառուած՝ առիթ չէր փոխցնէր կոստան-